ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 26 հուլիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Հայկ Զաքարյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Հայկ Զաքարյանը 14.07.2016թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «որոշել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 5-րդ մասի, 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ հարցը»:

Ըստ դիմողի՝ իր համար բացասական իրավական հետևանքներ են առաջացրել թիվ ՎԴ/4375/05/14 գործով դատարանների կողմից իր նկատմամբ կիրառված և

դատական ակտերում անմիջականորեն վկայակոչված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 5-րդ մասով, 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրույթները, որոնք իրավակիրառ պրակտիկայում՝ դրանց տրված մեկնաբանությամբ, հակասում են ՀՀ Սահմանադրության վերոնշյալ հոդվածներին:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթներին ՀՀ վարչական դատարանի կողմից տրված մեկնաբանությունն արգելափակում է անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը:

Դիմողը գտնում է, որ սույն դիմումով վիճարկվող դրույթներին դատարանի կողմից տրված մեկնաբանությունից բխում է, որ այն դեպքերում, երբ անձը ներկայացրել է հակընդդեմ հայցադիմում, որը մերժվել է դատարանի կողմից, այլևս վերջինս ըստ էության հնարավորություն չունի նոր հայցադիմում ներկայացնելու՝ անգամ պետական տուրքի վճարման հետաձգման փոփոխված միջնորդություն ներկայացրած լինելու պայմաններում: Նման պարագայում «կրկին» եզրույթին, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթներին տրված մեկնաբանությունների շրջանակներում հակընդդեմ հայցադիմումը ենթակա է մերժման՝ առանց այն բովանդակային քննարկման առարկա դարձնելու:

Դիմողի կարծիքով՝ նշված մեկնաբանությունը չի բխում ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների պահանջներից՝ անհամաչափորեն սահմանափակելով դատարանի մատչելիության իրավունքը:

Ըստ դիմողի՝ օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասն ընդամենը սահմանում է, որ հայցադիմումում թույլ տրված սխալները վերացնելու և որոշումն ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, հայցադիմումը վարչական դատարան կրկին ներկայացնելու դեպքում այն վարույթ ընդունված է համարվում սկզբնական ներկայացնելու օրը: Այսինքն՝ նշված նորմի կիրառման իրավական հետևանքն ընդամենն արտահայտվում է հայցադիմումի ներկայացման ժամկետի որոշման շրջանակներում և որևէ կերպ չի կարող մեկնաբանվել հայցադիմումի ներկայացման իրավունքի արգելափակման համատեքստում:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների

պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս, ի թիվս ըստ ձևի ներկայացվող պահանջների կատարման, անձը պետք է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորի, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ է ակնկալում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջն ինքնանպատակ չէ և համաձայն դրա՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով, ինչը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև, պահանջ, որը չի բավարարում Սահմանադրական դատարան ներկայացված խնդրո առարկա անհատական դիմումը:

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ արձանագրել է նաև, որ դիմումի բավարար հիմնավորված լինելու պահանջի բացակայություն է նաև այն հանգամանքը, երբ դիմողի հիմնավորումները կապված են ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի հետ, այլ վերաբերում են պարզապես այդ օրինադրույթի կիրառման իրավաչափության հարցին**,** իսկ նմանատիպ օրինապահանջները միտված են ապահովելու սահմանադրական արդարադատության իրականացման գործառույթի պատշաճ և արդյունավետ իրացում՝ դատարանին ձերբազատելով ինչպես անհիմն դիմումներից և դրանց հետևանքով Սահմանադրական դատարանն անհիմն ծանրաբեռնելուց, այնպես էլ այն դիմումներից, որոնք չեն ծառայելու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակին, այն է՝ ընդհանուր արդարադատության իրականացումը Սահմանադրությանը համապատասխանող օրենքների հիման վրա ապահովելուն:

Սույն գործի շրջանակներում դիմողը վերոհիշյալ դրույթի սահմանադրականության հարցի վիճարկման պահանջի քողի ներքո իրականում բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով: Հետևաբար, այս առումով առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Հայկ Զաքարյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

26 հուլիսի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/2-24